

## Քրիստինե Գաբուզյան

*ՀՀ գլխավոր դատախազի խորհրդակցական,  
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի  
քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս*

# ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ<sup>1</sup>

## Համառոտագիր

Հոդվածը նվիրված է հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառությանն առնչվող հիմնախնդիրներին: Հոդվածում ուսումնասիրվում են հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառության համար անհրաժեշտ չափանիշները, պայմանները, պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունները:

Հոդվածում զուգահեռներ են անցկացվում հայցային վաղեմության ժամկետի կասեցման և վերականգնման ինստիտուտների միջև, և քննարկվում է հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի գոյության անհրաժեշտությունը:

Արդյունքում, միջազգային փորձի հաշվառմամբ, հիմնավորվում է հայցային վաղեմության ժամկետի վերականգնումը որպես առանձին ինստիտուտ նախատեսելու աննպատակահարմարությունը՝ հաշվի առնելով նաև դրանից բխող գործնական խնդիրները:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերականգնման համար անհրաժեշտ համարվող այնպիսի պայմաններ, ինչպիսիք այդ հանգամանքների՝ անձի հետ կապված լինելն է, միայն ֆիզիկական անձի կողմից միջնորդություն ներկայացնելը, իրականում պետք է բացառվեն՝ նկատի ունենալով նաև պրակտիկայում տրված մեկնաբանությունները, իսկ մյուս պայմանները՝ հանգամանքների բացառիկությունն ու հարգելիությունը, ինչպես նաև այդ հանգամանքների տեղի ունենալը հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում, լիովին տեղավորվում են կասեցման հիմքերին ներկայացվող պահանջներում: Իսկ մի բանի համար, որը կարող է լիովին տե-

<sup>1</sup> Հոդվածը ներկայացվել է 08.10.2023թ., գրախոսվել է 13.11.2023թ.:

ղավորվել կասեցման ինստիտուտի ներքո, կարիք չկա ունենալ լրացուցիչ ինստիտուտ՝ հայցային վաղեմության ժամկետի վերականգնում՝ մանավանդ, նկատի ունենալով, որ այն որևիցե խնդիր չի լուծում, և դեռ ավելին՝ ավելացնում է անորոշությունն ու առաջացնում կիրառման դժվարություններ, հակասություններ, ուստիև առաջարկում ենք հրաժարվել բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու կառուցակարգից և սահմանափակվել միայն կասեցման ինստիտուտի գոյությամբ:

**Հիմնաբառեր** – հայցային վաղեմություն, ժամկետ, կասեցում, վերականգնում, բացառիկ դեպք, հարգելի ճանաչել:

### **Ներածություն**

Դեպքերի մեծամասնությունում հայցային վաղեմությունը սկսվելով հոսում է անընդհատ: Սակայն օրենքը հաշվի է առնում, որ իրական կյանքում կարող են առաջանալ այնպիսի հանգամանքներ, որոնք խոչընդոտում են (կամ առնվազն դժվարացնում են) իրավագոր անձին հայց ներկայացնել վաղեմության ժամկետի սահմաններում<sup>2</sup>: Օրենսդիրը չի կարող հաշվի չառնել նման հանգամանքների գոյությունը և դրանց հետ չկապել համապատասխան իրավական հետևանքներ, ուստի, նկատի ունենալով նշվածը, նախատեսել է համապատասխան կառուցակարգեր, որոնց թվում նաև՝ հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտը:

Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի<sup>3</sup> (այսուհետ նաև՝ ԶՕ) «Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելը» վերտառությամբ 342-րդ հոդվածը սահմանում է՝

«Բացառիկ դեպքերում, երբ դատարանը հայցվորի անձի հետ կապված հանգամանքների (ծանր հիվանդության, անօգնական վիճակի, անգրագիտության և այլն) հաշվառմամբ հարգելի է ճանաչում հայցային վաղեմության ժամկետի բացթողումը, քաղաքացու խախտված իրավունքը ենթակա է պաշտպանության: Հայցային վաղեմության ժամկետի բացթողման պատճառները կարող են ճանաչվել հարգելի, եթե դրանք տեղի են ունեցել հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում»:

Հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու համար կարևոր է որոշակի պայմանների միաժամանակյա առկայություն.

<sup>2</sup> Տե՛ս Мозолин В. П., Масляев А. И., Гражданское право, в 2-х ч., Ч. 1, М.: Изд. Юристъ, 2005, <https://jurisprudence.club/pravo-grajdansкое/priostanovlenie-pereryiv-vosstanovlenie.html> (մուտք 22.08.2022թ.):

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

1. հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք հանդիսացող հանգամանքների «բացառիկությունը»,
2. հանգամանքների՝ «անձի հետ կապված» լինելը,
3. հանգամանքների հարգելիությունը,
4. միայն տուժող *քաղաքացու* կողմից վերականգնման հարցի բարձրացումը,
5. վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվան կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում տեղի ունենալը:

Հարկ է նկատի ունենալ, որ թեպետ հայցային վաղեմությունը քաղաքացիական իրավունքին առավել վաղ հայտնի ինստիտուտներից է, այնուամենայնիվ մինչև օրս առկա կարգավորումները տարրնկալումների, տարատեսակ մեկնաբանությունների տեղիք են տալիս: Դիցուք՝ հայցային վաղեմության ժամկետի վերականգնման ինստիտուտի կիրառության համար նախանշված պայմանների առնչությամբ հաճախ ակնատես ենք լինում ոչ միատեսակ, հակադիր դիրքորոշումներ արտահայտող դատական պրակտիկայի: Այսպես, դատարանները տարբեր կերպ են մեկնաբանում «անձի հետ կապված հանգամանքներ» ձևակերպումը, ավելի լայն մեկնաբանելով համապատասխան նորմերը՝ հայցային վաղեմության ժամկետի կիրառությունը տարածում են նաև իրավաբանական անձանց նկատմամբ: Անորոշություն է առկա նաև հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառության ժամկետների առնչությամբ. մասնավորապես՝ որքա՞ն պետք է լինի համապատասխան հանգամանքների տևողությունը՝ որպես խոչընդոտ որակվելու և հարգելի ճանաչվելու համար, և որքա՞ն ժամանակ է տրամադրվում անձին դրանք դադարելուց հետո իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար:

Նշված անորոշությունն ու պրակտիկ խնդիրները պայմանավորված են նաև նրանով, որ չնայած հայցային վաղեմության՝ հնագույն ինստիտուտ լինելուն, դրան նվիրված կարգավորումները ժամանակի ընթացքում մնացել են գրեթե անփոփոխ, ինչը խնդրահարույց է զարգացող և արագ փոփոխվող քաղաքացիական իրավահարաբերությունների պարագայում:

Այս ամենը վկայում է, որ հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառության համար անհրաժեշտ պայմաններից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրության կարիք ունի՝ դրանց կիրառության ընթացքում ի հայտ եկող խնդիրներն ուրվագծելու և իրավահարաբերության կողմերի, քաղաքացիական շրջանառության մասնակիցների և ողջ հանրության շահերին համահունչ և իրավական որոշակիությանը համապատասխանող կարգավորումներ նախատեսելու նպատակով:

**1. Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք հանդիսացող հանգամանքների «բացառիկությունը»**

Առաջին չափանիշը, որով իրավասու մարմինը պետք է առաջնորդվի անձի հետ կապված այս կամ այն հանգամանքը որպես բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք գնահատելիս, «բացառիկությունն» է<sup>4</sup>:

Ինքնին հողվածում այս կամ այն հանգամանքի՝ վերականգնման հիմք լինելը գնահատելու համար որպես ուղենիշ նշված հանգամանքները՝ «ծանր հիվանդություն», «անօգնական վիճակ», «անգրագիտություն» (նամանակաձև վերջին երկուսը) վկայում են նման դեպքերի հազվագյուտ լինելու, այսինքն՝ բացառիկության<sup>5</sup> մասին:

Այսպես, օրինակ, անգրագիտության բացառիկության վկայությունը Հայաստանում անգրագիտության ցածր մակարդակն է. 2011թ.-ի մարդահամարի տվյալներով գրաճանաչ չէ Հայաստանի բնակչության միայն 0,3 տոկոսը<sup>6</sup>:

Նշենք նաև, որ սկնհայտ է, որ խոսքը վերաբերում է ընդհանուր անգրագիտությանը, այն չի կարող վերաբերել իրավական անգրագիտությանը<sup>7</sup>, ինչպես նաև այն դեպքերին, երբ անձը պարզապես չի տիրապետում լեզվին (թեպետ ռուսական գրականության մեջ որպես անգրագիտության օրինակ նշվել է նաև այն դեպքը, երբ հայցվորը չի տիրապետում ռուսաց լեզվին<sup>8</sup>): Անշուշտ, պետական

<sup>4</sup> Պետք է նշել, որ ՔՕ 342-րդ հոդվածի ձևակերպումն այնքան էլ հաջողված չէր համարում. սահմանումից թվում է, թե «բացառիկությունը» վերաբերում է ոչ թե հայցվորի անձի հետ կապված հանգամանքներին, այլ այն դեպքերին, երբ դատարանն իրավասու է հարգելի ճանաչել ժամկետի՝ այդ հանգամանքներով պայմանավորված բացթողումը:

<sup>5</sup> «Բացառիկ» բառը բնորոշվում է որպես 1. արտակարգ, արտասովոր, 2. բացառություն կազմող, տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 1, Գլխ. խմբ.՝ Ա. Ս. Ղարիբյան, ՀՄՍՀ ԳԱ, Հր. Աճառյանի անվ. լեզվի ին-տ., Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 306, [http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY\\_HY&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF) (մուտք 22.08.2022թ.):

Գրեթե նույն բնորոշումն է տալիս նաև Աղայանի բառարանը՝ 1. բացառություն կազմող, ընդհանուր կարգից՝ կանոնից բացառվող, 2. հազվագյուտ, արտակարգ, 3. միայն տվյալ անձին՝ կոլեկտիվին մարմնին պատկանող՝ վերաբերող, տե՛ս Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր 1, Է. Բ. Աղայան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 182, <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF> (մուտք 22.08.2022թ.) (Explanatory Dictionary of Modern Armenian, Volume 1:

<sup>6</sup> Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական - վերլուծական զեկույց, ըստ 2017թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան, 2018, [https://www.armstat.am/file/article/poverty\\_\\_2018-arm.pdf](https://www.armstat.am/file/article/poverty__2018-arm.pdf) (մուտք 22.08.2022թ.):

<sup>7</sup> St'u Sdelki, predstavitel'stvo, iskovaya давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации /отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М.: Изд. М-Логос, 2018, էջ 1242, Երևան քաղաքի Արարիկի և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ ԵԱՔԳ/0887/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

<sup>8</sup> St'u Sdelki, predstavitel'stvo, iskovaya давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации /отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М.: Изд. М-Логос, 2018, էջ 1242:

լեզվին չտիրապետելը կարող է դժվարություն առաջացնել իրավունքների խախտման մասին իմանալու կամ դրանց պաշտպանության իրականացմանը ձեռնամուխ լինելու հարցում, սակայն ինքնին անգրագիտության վկայություն չէ:

Լեզվին չտիրապետող անձի նկատմամբ պահանջները, ի տարբերություն ընդհանուր անգրագիտություն ունեցող անձի, ավելի խիստ են, նրանից ավելի մեծ շրջահայացություն է պահանջվում: Օրինակ՝ եթե փաստաթղթի բովանդակությունը սխալ հասկանալը, որի պատճառով անձը բաց է թողել հայցային վաղեմության ժամկետը, վերականգնման հիմք պետք է հանդիսանա անգրագետ անձի պարագայում, նույն նշանակությունը չպետք է ունենա պարզապես լեզվին չտիրապետող անձի համար, քանի որ վերջինս, հասկանալով իր՝ լեզվին բավարար չափով չտիրապետելու փաստը, պարտավոր էր հաշվի առնել սխալ հասկանալու ռիսկերը և փաստաթղթի բովանդակությունը պարզելու համար դիմել լեզվին տիրապետող որևիցե անձի կամ թարգմանչի օգնությանը: Նման դեպքում բացակայում է վերականգնելու համար անհրաժեշտ բացառիկությունը:

Ո՛չ իրավաբանական գրականության և ո՛չ էլ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ չտվեց հայտնաբերել, թե ինչն է ընկալվում վերականգնման հաջորդ հիմքի՝ «անօգնական վիճակի» ներքո:

Հետաքրքիր է այն, որ քրեական իրավունքում «անօգնականությունը» որոշ հետինակներ բնորոշում են հենց քաղաքացիաիրավական կատեգորիաների միջոցով՝ «անօգնական» եզրույթի տակ ընդգրկելով անձի ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված հանգամանքների լայն շրջանակ (այդպիսիների թվին են դասվում դատական կարգով սահմանափակ գործունակ ճանաչված անձինք կամ ծանր հոգեկան խանգարումներից տառապող և մասնագիտացված բժշկական հաստատությունում հաշվառված անձինք<sup>9</sup>, ծանր հիվանդներ, տարեցներ, անգիտակից վիճակում գտնվողներ, ծանր ալկոհոլային, թմրանյութային, թունային հարբածության տակ գտնվողներ և այլն<sup>10</sup>), որոնց մեծամասնությանը, սակայն, չի կարող իրավական նշանակություն տրվել քաղաքացիական իրավա-հարաբերություններում՝ բաց թողնված հայցային վաղեմության ժամկետները վերականգնելու ինստիտուտի կիրառության համատեքստում<sup>11</sup>:

Իրականում անօգնական վիճակը կարող է պայմանավորված լինել բազմա-

<sup>9</sup> Стів Шарикова В. С., Скрипченко Н. Ю., «Беспомощное состояние потерпевшего»: доктринальное определение и правоприменительная практика // Таврический научный обозреватель, № 3 (ноябрь), 2015, էջ 145:

<sup>10</sup> Стів Варданян А. В., Безручко Е. В., К вопросу о неоднозначной оценке беспомощного состояния в практике верховного суда российской федерации, журнал Известия Тульского государственного университета. Экономические и юридические науки, №3-2, 2015, էջ 11:

<sup>11</sup> Օրինակ՝ գործերից մեկով դատարանը նշել է, որ որպես բացառիկ դեպք վկայակոչած՝ հայցվորի տարիքը (ծնված՝ 18.10.1951թ.) բացառիկ դեպք չէ և հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու պատճառ չի կարող հանդիսանալ: Տե՛ս Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ ԵԱՔԴ/0887/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

պիսի հանգամանքներով՝ ինչպես առողջական, տարիքային (անչափահասների դեպքում), այնպես էլ այլ պատճառներով<sup>12</sup>:

Այս առումով կարծում ենք, որ «ծանր հիվանդությունը» որպես առանձին հիմք նշելը տեղին չէ, քանի որ նախ՝ այն կարող է լիովին տեղավորվել «անօգնական վիճակի» ներքո (այն հանգամանքը, որ հարգելի ճանաչելու հիմք հանդիսացող հանգամանքների շրջանակում չեն կարող ներառվել այն դեպքերը, երբ անձն ունեցել է ներկայացուցչի միջոցով հանդես գալու հնարավորություն<sup>13</sup>, վկայում է այն մասին, որ ծանր հիվանդությունների տակ օրենսդիրը նկատի է ունեցել հենց այն դեպքերը, երբ անձը գտնվում է անօգնական վիճակում, ինչը, կարծում ենք, ավելի համահունչ է նաև բացառիկության հատկանիշին), և բացի այդ, ինքնին նման կատեգորիան բժշկական տեսանկյունից այդքան էլ ճիշտ չէ<sup>14</sup>. Թերևս այդ է պատճառը, որ օրենսդրության մեջ տվյալ կատեգորիան կիրառելիս, որպես կանոն, նույն ակտով սահմանվում է նաև այն, թե որոնք են տվյալ ակտով կարգավորվող հարաբերությունների տեսանկյունից համարվում ծանր հիվանդություններ<sup>15</sup>, որպիսի մոտեցումը, այսինքն՝ սպառնիչ ցանկի նախատեսումը, անհնար է հայցային վաղեմության վերականգնման ինստիտուտի պարագայում:

Բացի այդ, ոչ բոլոր «ծանր հիվանդությունները» և ոչ միշտ են կարող խոչընդոտել իրավունքների պաշտպանությունն իրականացնելուն: Օրինակ՝ հոգեկան խան-

<sup>12</sup> Որպես անօգնական վիճակի օրինակ գրականության մեջ նշվել է այն դեպքը, երբ հայցվորը պահվել է որպես զերի: Տե՛ս Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации / отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А.; М.: М-Логос, 2018, էջ 1242:

<sup>13</sup> Տե՛ս Тархов В. А., Гражданское право. Общая часть: Курс лекций. Чебоксары: Чув. кн. изд-во, 1997, էջ 246, Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԳ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

<sup>14</sup> Հիվանդությունների դասակարգման չափանիշների մասին տե՛ս Порядин Г. В., Введение в патофизиологию. Предмет и задачи патофизиологии, Лекция 1, <https://medknigaservis.ru/wp-content/uploads/2019/01/NF0011912.pdf> (մուտք 22.08.2022թ.), Патофизиология: учебник: в 2 т. / под ред. В. В. Новицкого, Е. Д. Гольдберга, О. И. Уразовой, 4-е изд., перераб. и доп., ГЭОТАР-Медиа, 2009, Т. 1, <https://fnkcr.ru/elib/resource20.pdf> (մուտք 22.08.2022թ.), Ефремов А. В., Начаров Ю. В., Самсонова Е. Н., Основы общей нозологии: Учебное пособие, Новосибирск, 2006, <https://studfile.net/preview/2705074/page/6/>, (մուտք 22.08.2022թ.):

Թեև բժշկական գրականության մեջ հանդիպում է դեպք, երբ դասակարգման հիմքում որպես սկզբունք դրված է ծանրությունը, սակայն այդտեղ խոսքը հիվանդի վիճակի ծանրության մասին է (ծայրահեղ ծանր, ծանր, միջին և թեթև աստիճանի ծանրություն): Տե՛ս Курс лекций по патофизиологии: учебное пособие для студентов медицинских вузов: в 4-х ч., Ч. 1, Ю. Ю. Бяловский [и др.] / под ред. Ю. Ю. Бяловского, В. В. Давыдова, Рязань, 2018, 2018, էջ 23, <https://rzmgu.ru/images/files/6/13090.pdf> (մուտք 22.08.2022թ.):

<sup>15</sup> Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման հավելված 2-ով հաստատված է պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկը (ընդունվել է 26.05.2006թ., ուժի մեջ է մտել 16.07.2006թ., ՀՀԳՏ 2006.07.06/36(491) Հոդ.781):

գարումներն ամենատարբեր բնույթի ու ծանրության են լինում, սակայն անկախ ծանրությունից՝ իրավունքների պաշտպանությունն իրականացնելու խոչընդոտ են միայն, եթե հոգեկան խանգարման հետևանքով անձը առհասարակ կամ տվյալ կոնկրետ ժամանակահատվածում չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ դեկավարել դրանք՝ անկախ անգործունակ ճանաչված լինելու հանգամանքից: Անգամ ծանրագույն հիվանդությունների դեպքում, օրինակ՝ ցրված կամ բազմակի սկլերոզի<sup>16</sup> հազվադեպ տեսակի՝ չարորակ ցրված կամ բազմակի սկլերոզի՝ Մարբուրգի հիվանդության դեպքում մի քանի ամիս շարունակ անձը կարող է գտնվել կոմատոզ վիճակում, որից հետո նկատվի դրական դինամիկա<sup>17</sup>:

Ստացվում է՝ «անօգնական վիճակը» լայն հասկացություն է, որը ներառում է նաև ծանր հիվանդությամբ պայմանավորված իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելու անկարողությունը, իսկ «ծանր հիվանդություն» եզրույթն, ինչպես տեսանք, ամորոշ է և դրանով իսկ, կարծում ենք, տարաբնույթ մեկնաբանության ու հետևաբար նաև ոչ միատեսակ կիրառման ռիսկեր է պարունակում:

## **2. Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք հանդիսացող հանգամանքների՝ «անձի հետ կապված» լինելը**

Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառության համար բավարար չէ հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու պատճառ հանդիսացած հանգամանքների բացառիկությունը. «բացառիկ» հիմքերը պետք է կապված լինեն հենց պարտատիրոջ հետ, ընդ որում՝ պահանջվում է, որ այդ հիմքերը լինեն *«անձի հետ կապված»*: Բոլոր այն հանգամանքները, որոնք կապված են պատասխանողի<sup>18</sup> կամ այլ անձանց հետ և թեկուզ իրականում խոչընդոտել են հայցվորի՝ իր իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելուն, չեն կարող համարվել հարգելի<sup>19</sup>:

Իսկ ինչ նկատի ունի օրենսդիրը «անձի հետ կապված» հանգամանքի ներքո: ԹՕ 342-րդ հոդվածում թվարկված հիմքերի՝ իրավակիրառողի համար ուղղորդիչ նշանակություն ունեցող ոչ սպառիչ ցանկը թույլ է տալիս եզրահանգել, որ

<sup>16</sup> Վերջինս ինքնին լայն տարածված հիվանդություն չէ: 2020թ, տվյալներով ամբողջ աշխարհում գրանցված է 2,8 միլիոն հիվանդության դեպք տարբեր երկրներում և պոպուլյացիաներում տարբեր հաճախականությամբ, Atlas of MS, 3rd edition, PART 2: Clinical management of multiple sclerosis around the world, Key findings about the diagnosis and clinical management of MS, MS international federation, April 2021, <https://www.msif.org/wp-content/uploads/2021/05/Atlas-3rd-Edition-clinical-management-report-EN-5-5-21.pdf> (access 24.04.2023):

<sup>17</sup> Տե՛ս Волошина Н. П., Зозуля И. С., Егоркина О. В., Костюковская А. Е., Рассеянный склероз с фульминантным течением, Академия дистанционное обучение, Укр. мед. Часопис, №4 (84) VII - VIII, 2011, էջ 36-38, <https://www.umj.com.ua/article/16414/rasseynnyj-skleroz-s-fulminantnym-techeniem> (մուտք 22.08.2022թ.):

<sup>18</sup> Տե՛ս Гражданское право: учебник, Т. 1 / под редакцией А. П. Сергеева, Ю. К. Толстого, . М.: Изд. “Проспект”, 2005, էջ 375:

<sup>19</sup> Տե՛ս ի թիվս այլնի Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԱՎԳ3/0144/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշումը:

թերևս «անձի հետ կապված հանգամանք» ձևակերպումը միտված է ընդգծելու այդ հանգամանքների «սուբյեկտային» բնույթը, որոնք ի տարբերություն կասեցման հիմքերի՝ միայն կոնկրետ անձին առնչվող հանգամանքներ են:

Այսպես, գործերից մեկով Վերաքննիչ դատարանը նշել է՝ «... հայցային վաղեմության ժամկետի վերականգնման համար հարգելի ճանաչվող հանգամանքները պետք է ունենան ընդհանուր հատկանիշներ նույն հոդվածում նշված օրինակների հետ: Այդպիսի օրինակների վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանց հիմքում դրված է մեկ ընդհանուր հատկանիշ՝ հայցվորի համար իր անձի հետ կապված՝ իրավունքների և պարտականությունների իրացման անհնարինություն ստեղծող որոշակի օբյեկտիվ իրադրություն, որպիսի պայմաններում հայցվորը, սուբյեկտիվ անկարողությունից ելնելով, չի կարողացել իրացնել օրենքով սահմանված ժամկետում հայց ներկայացնելու իրավունքը»<sup>20</sup>:

«Անձի հետ կապված հանգամանքներ» ձևակերպումն իրականում սահմանափակում է հայցային վաղեմության ժամկետի վերականգնման ինստիտուտի կիրառման հնարավորությունը՝ դրանից բխող բացասական հետևանքներով<sup>21</sup>. «անձի հետ կապված հանգամանք» ձևակերպման նման սահմանափակ մեկնաբանումը պրակտիկայում խնդիրներ է հարուցում՝ հանգեցնելով հակասական դատական պրակտիկայի<sup>22</sup>:

Պետք է նշել, որ պրակտիկան իրականում առաջ է գնացել և չի սահմանափակվում հոդվածի տառացի մեկնաբանությամբ: Մասնավանդ անտեղին է դառնում նշված հատկանիշի կիրառումը նաև իրավաբանական անձանց նկատմամբ ինստիտուտի գործողությունը տարածելու պարագայում<sup>23</sup>:

Բացի այդ, որպես բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք նշված այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են այլ անձանց կողմից խոչընդոտներ ստեղծելը կամ փաստաթղթերի ահռելի, անկանոն կուտակումները<sup>24</sup>՝ դատարանները չեն համարել հարգելի հիմքեր՝ պատճառաբանելով

<sup>20</sup> Տե՛ս Վերաքննիչ դատարանի՝ 2019 հունիսի 6-ի թիվ ԵԱՔԳ/3849/02/15 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:  
<sup>21</sup> Գրականության մեջ ևս ընդգծվել է «հայցվորի անձի հետ կապված հանգամանքներով» ձևակերպումից ազատվելու անհրաժեշտությունը: Տե՛ս Տլանով Գ. Թ., Некоторые проблемы применения исковой давности //Научный альманах. N 7 (9), 2015, էջ 1156, <http://ucom.ru/doc/na.2015.07.1154.pdf> (մուտք 22.08.2022թ.):  
<sup>22</sup> Օրինակ՝ հարազատների հիվանդության, նրանց նկատմամբ խնամք իրականացնելու հանգամանքի՝ որպես վերականգնման հիմքի կապակցությամբ պրակտիկայում տարբեր մոտեցումներ են արտահայտվել: Տե՛ս Վերաքննիչ դատարանի՝ 2019 հունիսի 6-ի թիվ ԵԱՔԳ/3849/02/15 քաղաքացիական գործով կայացրած որոշումը և Վճռաբեկ դատարանի՝ 2007 թ. նոյեմբերի 9-ի թիվ 3-1133(ՎԳ) քաղաքացիական գործով կայացրած որոշումը :  
<sup>23</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԳ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:  
<sup>24</sup> Տե՛ս Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի 2020թ. օգոստոսի 28-ի թիվ ԵԳ/21599/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը և Վերաքննչ դատարանի՝ 2020թ. օգոստոսի 21-ի թիվ ՏԳ/2323/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:



դրանց՝ հայցային վաղեմության ժամկետները լրանալուց ավելի քան վեց ամիս առաջ տեղի ունեցած լինելու հանգամանքը, այլ ոչ թե անձնական բնույթի բացակայությունը:

Այսինքն՝ ըստ էության չի բացառվում, որ եթե դրանք տեղի ունենային վերջին վեց ամսվա ընթացքում, դատարանը կանդրադառնար դրանք հարգելի ճանաչելու հնարավորությանը:

Այսպես, որպես հարգելի կարող են դիտվել նաև հանգամանքներ, որոնք, կապված չլինելով հայցվորի մեղքի, անփութության կամ անուշադրության հետ, անհնար կամ ծայրահեղ դժվարին են դարձնում իրավունքների պաշտպանությունը. օրինակ՝ ռուսական դատական պրակտիկայում նրանց թվին է դասվել բուժ-հաստատության վարչակազմի կողմից անգործունակին խնամակալ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փոխանցման տևական ձգձգումը<sup>25</sup>:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառման համար պարտադիր պայման չէ այս կամ այն հանգամանքի՝ հայցվորի անձի հետ կապված լինելը, ընդ որում, այդպիսիք կարող են որակվել նաև այլ անձանց կողմից ստեղծվող խոչընդոտները:

### **3. Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու հիմք հանդիսացող հանգամանքների հարգելիությունը**

Վերը քննարկված հանգամանքներն ինքնին բավարար չեն կոնկրետ հանգամանքը հայցային վաղեմության ժամկետը վերականգնող հիմք դիտելու համար. անհրաժեշտ է, որ այդ հանգամանքներն իրենց բնույթով լինեն հարգելի:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հարգելիության չափանիշին, նշել է, որ նկատի ունենալով այն, որ հայցային վաղեմության ժամկետի բացթողումը կարող է պայմանավորված լինել նաև օբյեկտիվ հանգամանքներով, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 342-րդ հոդվածում նախատեսել է հայցային վաղեմության ժամկետի բացթողումը դատարանի կողմից հարգելի ճանաչելու կառուցակարգ<sup>26</sup>:

«Հարգելիությունը» որոշելու չափանիշ պետք է դիտվի այն, թե որքանով է կոնկրետ հանգամանքը խոչընդոտել իրավունքների պաշտպանությունն իրականացնելուն: Ընդ որում, նշված շրջանակում չեն կարող ներառվել այն դեպքերը, երբ անձը գրկված չէ ներկայացուցչի միջոցով հանդես գալու հնարավորությունից<sup>27</sup>:

Հարգելի չեն կարող համարվել այն դեպքերը, երբ ժամկետի բացթողումը ան-

<sup>25</sup> Ст'я Определение ВС РФ от 25 ноября 2014 г. № 78-КГ14-36. [http://www.supcourt.ru/stor\\_pdf.php?id=622776](http://www.supcourt.ru/stor_pdf.php?id=622776) (մուտք 22.08.2022թ.):

<sup>26</sup> Ст'я Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԳ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

<sup>27</sup> Ст'я Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԱՎԳ3/0144/02/12 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԳ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

ձի մեղավորության, այդ թվում՝ անփութության արդյունք է: Օրինակ՝ դատական պրակտիկայում իրավամբ հարգելի չեն ճանաչվում հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու այնպիսի պատճառներ, ինչպիսիք վիճելի հրամանները (կարգապահական տույժի կիրառման և աշխատանքից ազատելու մասին) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դատարանում վիճարկելու փոխարեն իրավունքների պաշտպանությունը արտադատական կարգով իրականացնելու փորձը<sup>28</sup>, հայց ներկայացնելու համար ամբողջական փաստաթղթեր չունենալը<sup>29</sup>, ինչպես նաև հայցադիմումը վերադարձնելուց հետո դատարանի կողմից սահմանված ժամկետում թերությունները շտկելու և կրկին հայցադիմումը ներկայացնելու փոխարեն՝ դատարանի որոշումը բողոքարկելը<sup>30</sup>:

#### **4. Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու համար դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտը**

Մյուս պայմանը, որը բխում է հողվածի տառացի մեկնարանությունից, այն է, որ հայցային վաղեմության ժամկետի վերականգնման հարցը կարող է դրվել միայն տուժող քաղաքացու կողմից:

Այս տեսանկյունից ՀՀ դատական պրակտիկան մեկ քայլ առաջ է: Վճռաբեկ դատարանն իր՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԴ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ<sup>31</sup>, իրացնելով իրեն վերապահված իրավունքի զարգացմանը նպաստելու գործառնությունը (մինչ այդ Վճռաբեկ դատարանը ևս արձանագրել էր, որ որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնում հայցող սուբյեկտ կարող են հանդես գալ բացառապես ֆիզիկական անձինք<sup>32</sup>), նշել է, որ որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնում՝ հայցող սուբյեկտ կարող են հանդես գալ ոչ միայն ֆիզիկական անձինք, այլև իրավաբանական անձինք: Թեպետ, պետք է նշել, որ անգամ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումից հետո էլ դատարանները շարունակում են 342-րդ հոդվածը չկիրառելու հիմքում դնել իրավաբանական անձանց նկատմամբ վերականգնման ինստիտուտի կիրա-

<sup>28</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. դեկտեմբերի 11-ի թիվ ԾԴ-1/0848/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 24-ի թիվ ԿԴ3/1217/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016թ.-ի մայիսի 5-ի թիվ ԱՎԴ/3507/02/15 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

<sup>29</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. մարտի 4-ի թիվ ԾԴ/3951/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

<sup>30</sup> Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020թ. մարտի 17-ի թիվ ԵԴ/36304/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

<sup>31</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԴ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

<sup>32</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ ԱՎԴ3/0144/02/12 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

ռելի չլինելը<sup>33</sup> արդյունքում շեղվելով Վճռաբեկ դատարանի կողմից խնդրո առարկա նորմին տրված մեկնաբանությունից:

### **5. Հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի կիրառության ժամկետային պայմանները**

Հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու պատճառները կարող են հարգելի ճանաչվել, եթե նրանք տեղի են ունեցել վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվան կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում:

Նշված կարգավորումից, սակայն, հստակ չէ, թե համապատասխան հանգամանքների տևողությունն ինչքան պետք է լինի՝ որպես խոչընդոտ որակվելու և հարգելի ճանաչվելու համար, և որքան ժամանակ է տրամադրվում անձին դրանք դադարելուց հետո իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար:

Վճռաբեկ դատարանը փորձ է արել բացատրել նշված դրույթը, մասնավորապես նշել է հետևյալը՝ «հողվածի հիշատակված դրույթում ամրագրված հանգամանքները պետք է տեղի ունենան հայցային վաղեմության վերջին վեց ամիսների ընթացքում և տևեն մինչև ժամկետի ավարտը: Այլ կերպ՝ եթե հարգելի հանգամանքներն ի հայտ են եկել վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, սակայն վերացել են մինչև ժամկետի ավարտը, և անձն ունեցել է հայց ներկայացնելու ժամանակ, սակայն բաց է թողել այն, ուրեմն բացթողումը հարգելի համարվել չի կարող»<sup>34</sup>:

Չենք կարծում, թե Վճռաբեկ դատարանի պարզաբանումը հստակություն և որոշակիություն է մտցնում բարձրացված հարցերում: Ընդհակառակը, կարծում ենք, որ այն իրավունքների խախտման վտանգ է պարունակում՝ նկատի ունենալով, որ հայց ներկայացնելու համար բավարար է դիտվում վեցամսյա ժամանակահատվածից զգալիորեն պակաս ցանկացած ժամանակահատված, որպիսի պարագայում բացառված չէ, որ հայց ներկայացնելու համար բավարար դիտվի, օրինակ, մեկ կամ երկու շաբաթը և բաց թողնված ժամկետը չվերականգնվի, հնարավոր է, որ անգամ մեկ օրը բավարար համարվի՝ նկատի ունենալով, որ Վճռաբեկ դատարանը շեշտել է, որ այդ հանգամանքները պետք է տեղի ունենան հայցային վաղեմության վերջին վեց ամիսների ընթացքում և **տևեն մինչև ժամկետի ավարտը**:

Մյուս խնդրահարույց հարցն այն է, թե որքան ժամանակ է տրամադրվում

<sup>33</sup> Տե՛ս ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. հոկտեմբերի 1-ի թիվ № ԳԴ-4/2018/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ № ԳԴ-4/2344/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020թ. մարտի 11-ի թիվ ՏԴ/2323/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

<sup>34</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ 2013 թ հոտեմբերի 4-ի թիվ ԱՎԴ-3/0144/02/12 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

անձին այդ հանգամանքների դադարումից հետո իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելու համար:

Ակնհայտ է, որ վերականգնման հիմք հանդիսացող հանգամանքների գոյությունը դադարելուց հետո անձը չպետք է հնարավորություն ունենա անորոշ ժամկետով ձգձգել իրավունքի պաշտպանությունը:

Գրականության մեջ խոսվում է ողջամիտ ժամկետի մասին այն բանից հետո, երբ դադարել են վաղեմության ժամկետի բացթողումն արդարացնող հարգելի հանգամանքները, որի սահմաններից դուրս հայց ներկայացնելու դեպքում բաց թողնված վաղեմության ժամկետը վերականգնելու մասին հայցվորի միջնորդությունը պետք է դիտել որպես իրավունքի չարաշահում<sup>35</sup>:

Սակայն, հարցը դիտելով Վճռաբեկ դատարանի վերոնշյալ մեկնաբանության լույսի ներքո, ակնհայտ է ռիսկը, որ որպես բավարար կարող են որակվել նաև շատ կրճատ ժամանակահատվածները:

Քննարկվող ձևակերպման անհաջող ու անորոշ լինելու մասին է վկայում նաև դատական պրակտիկան: Գործերից մեկով դատարանը, անդրադառնալով հայցային վաղեմության ժամկետի վերականգնման ինստիտուտի կիրառության ժամանակային սահմանափակումներին, նշել է, որ *հիշատակված իրավանդումի վերլուծությունից բխում է, որ նույնիսկ հայցային վաղեմության ժամկետը հարգելի նախաձեռնման պարագայում, այդ ժամկետը կարող է վերականգնվել հայցային վաղեմության ժամկետով* (ընդգծումը՝ Գ. Բ.)<sup>36</sup>:

Այսինքն՝ դատարանն, ըստ էության, անալոգիայով կիրառել է 339-րդ հոդվածի 4-րդ մասով կասեցման համար սահմանված կանոնը:

**6. Չուգահեռներ հայցային վաղեմության ժամկետի վերականգնման և կասեցման ինստիտուտների միջև. հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի անհրաժեշտության հարցը**

Հայցային վաղեմության ժամկետի վերականգնման համար անհրաժեշտ պայմանների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում դրա նմանությունը հայցային վաղեմության կասեցման ինստիտուտի հետ, մանավանդ ֆիզիկական խոչընդոտի՝ անհաղթահարելի ուժի հետ:

Քննարկվող հոդվածում օգտագործվող «բացառիկ դեպքերում» արտահայտությունը հիմք է տալիս աղերսներ նկատելու ՔՕ 339-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որպես հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցնելու հիմք նախատեսված և որպես արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հան-

<sup>35</sup> Ст'я Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации // отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М., Изд.: М-Логос, 2018, էջ 1245:

<sup>36</sup> Ст'я ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015թ. ապրիլի 1-ի թիվ ԵԱԲԴ/1553/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

գամանք բնութագրվող անհաղթահարելի ուժի հետ: Բացառիկության (հազվադեպ լինելու) պահանջը ըստ էության նույնանման է անհաղթահարելի ուժի պարտադիր բնութագրիչ համարվող «արտակարգությանը»:

Բացի այդ, կարող ենք զուգահեռ անցկացնել նաև անհաղթահարելի ուժի բնութագրիչ անկասելիության և վերականգնման հիմքերից պահանջվող հարգելիության միջև:

Պատահական չէ, որ գրականության մեջ հատուկ շեշտվել է դրանց տարբերակման անհրաժեշտությունը՝ հիմքում դնելով այն, որ հարգելի պատճառների թվին են դասվում խոչընդոտները, որոնք անհաղթահարելի են տվյալ անձի համար, բայց անհաղթահարելի չեն ընդհանուր առմամբ<sup>37</sup> (նման մոտեցումը չի կարելի ընդունել անվերապահորեն. կասեցման հիմքերում ևս առկա են այնպիսիք, որոնք սուբյեկտիվ բնույթի են, անկանխելի են միայն տվյալ կոնկրետ անձի համար (օրինակ՝ անգործունակ անձի ներկայացուցիչ չունենալը)): Այսինքն՝ վերականգնման հիմքերը նույնացվում են պատահարների<sup>38</sup> հետ, մինչդեռ, իրականում առնվազն չեն կարող սահմանափակվել դրանցով (օրինակ՝ վերականգնման հիմքերի շարքում նշված է նաև անգրագիտությունը):

Ուստի, թեև պատահարների հետ նույնացումն անթույլատրելի է, սակայն պարտադիր պայման պետք է լինի անկանխելիությունը, որը, սակայն, ի տարբերություն պատահարների, պետք է վերաբերի ոչ թե բուն իրադարձությանը<sup>39</sup> (այս պարագայում իրադարձությունն ինքնին կարող է և անկանխելի լինել), այլ տվյալ պարագայում մեկնաբանվի ավելի լայն. օրինակ՝ եթե անձը իմացել է որոշակի իրադարձության վրա հասնելու մասին, հնարավորություն չի ունեցել կանխել այն, սակայն հնարավորություն է ունեցել մինչև վրա հասնելը քայլեր ձեռնարկել իրավունքների պաշտպանության ուղղությամբ, ապա հայցային վաղեմության ժամկետի բացթողումը չպետք է ճանաչվի հարգելի. այսինքն՝ այստեղ կարևոր

<sup>37</sup> Ст'ю Тархов В. А., Гражданское право. Общая часть: Курс лекций, Чебоксары: Чув. кн. изд-во, 1997, էջ 246:

<sup>38</sup> Պատահար են համարվում այնպիսի երևույթները, որոնք տեղի են ունենում պարտապանի կամքից անկախ: Պատահարը սուբյեկտիվորեն անկանխատեսելի և անկանխելի երևույթ է, քանի որ դրա առաջանալու մասին պարտապանը չգիտի և պարտավոր չէ գիտենալ: Ընդ որում՝ դրանք այնպիսի երևույթներ են, որոնք հնարավոր է կանխել, եթե անձը գիտենա դրանց առաջանալու մասին: Ст'ю Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 4-րդ հրատ., «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2014, էջ 538:

Պատահարի և անհաղթահարելի ուժի տարբերությունների մասին առավել մանրամասն տե՛ս Головин Н. М., Разграничение категорий «случай» и «непреодолимая сила» // Политика, государство и право, 2013. № 2 (14), <http://politika.snauka.ru/2013/02/653> (մուտք 22.08.2022թ.):

<sup>39</sup> Պատահարն այն է, ինչը ոչ որ նախորդ կանխատեսելի չի կարող: Քանի որ այն նախապես կանխատեսելի հնարավոր չէ, այն բնութագրվում է սուբյեկտիվ անկասելիությամբ: Դրա հետ մեկտեղ, եթե անձը իմանար սպասվող պատահարի մասին, նա կկարողանար այն կանխել: Այսպես, անկանխատեսելիության հատկանիշը դեպքի համար հիմնական է: Ст'ю Иванова С. Н., Понятие непреодолимой силы и ее квалифицирующих признаков в современном гражданском праве // Пробелы в российском законодательстве, Юридический журнал, 2008, Изд. дом ЮР-ВАК, № 2, էջ 111:

նշանակություն չունի անձի կողմից իրադարձության վրա հասնելը կանխատեսելու պարագայում այն կանխելու հնարավորությունը:

Որոշակի բացառիկ հանգամանքներով պայմանավորված հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի կարող է համարվել միայն այն պարագայում, երբ հետևանքներն անկանխելի են եղել, և բացակայել է անձի մեղքը:

Այսպիսով, վերը ներկայացված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերականգնման համար անհրաժեշտ համարվող այնպիսի պայմաններ, ինչպիսիք այդ հանգամանքների՝ անձի հետ կապված լինելը, միայն ֆիզիկական անձի կողմից միջնորդություն ներկայացնելը, իրականում պետք է բացառվեն, իսկ մյուս պայմանները՝ հանգամանքների բացառիկությունն ու հարգելիությունը, ինչպես նաև այդ հանգամանքների տեղի ունենալը հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսում, իսկ եթե այդ ժամկետը հավասար է վեց ամսվա կամ պակաս է վեց ամսից՝ վաղեմության ժամկետի ընթացքում, լիովին տեղավորվում են կասեցման հիմքերին ներկայացվող պահանջներում:

Առկա կարգավորումների պարագայում ստացվում է, որ նմանատիպ հանգամանքների հետ օրենսդիրը կապում է տարբեր իրավական հետևանքներ, մի դեպքում՝ հայցային վաղեմության ժամկետի կասեցում, մեկ այլ դեպքում՝ վերականգնման հնարավորություն:

Մինչդեռ թե՛ կասեցման և թե՛ վերականգնման հիմքերն ըստ էության կարող են վերաբերել թե՛ իրավաբանական և թե՛ ֆիզիկական խոչընդոտների, երկուսն էլ տևական բնույթ ունեն, երկուսի դեպքում էլ մինչև համապատասխան հանգամանքի վերանալը (կասեցման պարագայում իհարկե միայն ֆիզիկական խոչընդոտների դեպքում) կարող է խոչընդոտող բնույթը դադարել և երկուսի պարագայում էլ պետք է պարզել խոչընդոտի գոյության տևողությունն ու ըստ այդմ չհաշվարկել հայցային վաղեմության ժամկետի մեջ:

Երկու դեպքում էլ գործ ունենք այնպիսի հանգամանքների հետ, որոնք գոյություն ունեն օբյեկտիվորեն, և որոնց խոչընդոտող բնույթը կախված չէ կողմերի կամքից, անգամ եթե նրանց գործողությունների հետևանք են (օրինակ՝ կասեցման հիմք հանդիսացող իրավաբանական խոչընդոտների դեպքում), և որոնք չեն կարող կանխվել անձի կողմից:

Գրականության մեջ որպես հայցային վաղեմության ժամկետի վերականգնման ինստիտուտի առանձնահատկություն, որով այն սկզբունքորեն տարբերվում է կասեցումից և ընդհատումից, նշվում է այն, որ վերականգնվում է արդեն լրացած վաղեմությունը, և դատարանը ելնում է այդ հանգամանքից<sup>40</sup>: Միևնույն ժամանակ վերականգնման արդյունքում տեղի չի ունենում հայցային վաղեմության վերսկսում, այլ միայն պաշտպանություն է տրվում անձի խախտված իրա-

<sup>40</sup> Ст'и Гражданское право: учебник, Т. 1, под редакцией А. П. Сергеева, Ю. К. Толстого, М.: Изд. "Проспект", 2005, էջ 375:

վունքին հայցային վաղեմության ժամկետի բացթողումը հարգելի համարելու հիմքերի առկայության դեպքում՝ չնայած վաղեմությունն անցած լինելուն<sup>41</sup>:

Թեպետ առկա են որոշ տարբերություններ, փաստացի թե՛ կասեցման ու թե՛ վերականգնման իրավական հետևանքը նույնն է. անտեսվում է խոչընդոտների գոյության ժամանակահատվածը, և հնարավորություն է տրվում անձին պաշտպանել իր խախտված իրավունքը:

Սակայն վերականգնման ինստիտուտի կիրառումը օրենսդիրը պայմանավորում է ավելի խիստ չափանիշներով, որոնք, ինչպես տեսանք, անհարկի սահմանափակում են պաշտպանության իրավունքն ու թերևս հենց այդ պատճառով դատական պրակտիկայում հաճախ շրջանցվում:

Բացի այդ, նաև անհասկանալի և անտրամաբանական է, թե ինչու է մի խոչընդոտի (հաճախ բավականին նման) դեպքում հայցային վաղեմության ժամկետը համարվում լրացած, իսկ մյուսի դեպքում՝ ոչ:

Առկա կարգավորումների պարագայում ստացվում է, որ եթե, օրինակ, անձը երկու օր գտնվել է ռազմական դրության փոխադրված զինված ուժերի կազմում, ապա նրան տրամադրվում է լրացուցիչ վեց ամիս ժամանակ իրավունքների պաշտպանության համար: Մինչդեռ, հայցային վաղեմության ժամկետի վերջին վեց ամսվա ընթացքում մեկ ամիս կոմատոզ վիճակում գտնվելուն ոչ մի իրավական նշանակություն կարող է և չտրվել հայցային վաղեմության ժամկետի ընթացքի վրա ազդեցության տեսանկյունից:

Կասեցման դեպքում իրավական նշանակություն չի տրվում նաև ներկայացուցչի միջոցով պաշտպանությունն իրականացնելու հնարավորությանը, ինչը որոշ դեպքերում, կարծում ենք, անհիմն առավելություն է:

Վերոնշյալ հանգամանքները վկայում են այն մասին, որ իրականում բացակայում է կասեցման և վերականգնման հիմք հանդիսացող հանգամանքները սահմանազատելու անհրաժեշտությունը:

### **Եզրակացություն**

Վերոգրյալը ցույց է տալիս, որ առկա է առհասարակ հայցային վաղեմության ժամկետը վերականգնելու ինստիտուտի գոյության նպատակահարմարությունը վերանայելու անհրաժեշտություն: Կարծում ենք՝ կատարված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնել, որ գործնականում բացակայում է կասեցման և վերականգնման հիմք հանդիսացող հանգամանքներն առանձին նախատեսելու անհրաժեշտությունը, և նման պարագայում վերականգնման հիմք հանդիսացող

<sup>41</sup> Ст'у Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации /отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М.: Изд. М-Логос, 2018, էջ 1241, Վճռարեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԱՎԳՅ/0144/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշումը, Վճռարեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԳ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

հանգամանքներին ավելի խիստ պահանջներ առաջադրելը չի համապատասխանում արդարության, համաչափության սկզբունքներին և կարող է անգամ չարաշահումների տեղիք տալ: Ուստի, կարծում ենք, որ բացակայում է կասեցման ու վերականգնման ինստիտուտները տարբերակելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, հայցային վաղեմության վերականգնման ինստիտուտի հատկանիշների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այն մեծամասամբ նույնանում է հայցային վաղեմության ժամկետի կասեցման ինստիտուտի հետ, իսկ եթե ինչ-որ բան բաղի տեսք ունի, լողում է բաղի նման և կականում է բաղի պես, սպա այն հավանաբար բաղ է<sup>42</sup>:

Ընդ որում, հարկ է նկատել, որ բացառությամբ հետխորհրդային տարածաշրջանի մի շարք երկրների՝ վաղեմության վերականգնման ֆենոմենը գործնականորեն հայտնի չէ արտասահմանյան օրենսդրություններին, այն չի հիշատակվում նաև հայցային վաղեմության ինստիտուտին առնչվող կարգավորումներ պարունակող միջազգային ակտերում (Ունիդրոյաի սկզբունքներ<sup>43</sup>, Եվրոպական մասնավոր իրավունքի մոդելային կանոններ<sup>44</sup>, «Ապրանքների միջազգային առուծախում հայցային վաղեմության մասին» ՄԱԿ-ի 1974 թվականի կոնվենցիա<sup>45</sup>)<sup>46</sup>:

Ուստի, կարծում ենք, մի բանի համար, որը կարող է լիովին տեղավորվել կասեցման ինստիտուտի ներքո, կարիք չկա ունենալ լրացուցիչ ինստիտուտ՝ հայցային վաղեմության ժամկետի վերականգնում՝ մանավանդ, նկատի ունենալով, որ այն որևիցե խնդիր չի լուծում, և դեռ ավելին՝ ավելացնում է անորոշություն ու կիրառման դժվարություններ, հակասություններ, և կարող ենք «Օկկամի ածելի» սկզբունքի կիրառմամբ հրաժարվել բաց թողնված հայցային վաղեմության

<sup>42</sup> Տե՛ս [<sup>43</sup> Տե՛ս Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, <https://www.unidroit.org>](https://idioms.thefreedictionary.com/duck+test(access 24.04.2023): /instruments/commercial-contracts/unidroit-principles-2016(access 22.08.2022):</a></p></div><div data-bbox=)

<sup>44</sup> Տե՛ս Principles, Definitions and Model Rules of European Private Law, Draft Common Frame of Reference (DCFR), Articles and Comments [Interim Edition, to be completed], prepared by the Study Group on a European Civil Code and the Research Group on the Existing EC Private Law (Acquis Group), [https://www.ccbe.eu/NTCdocument/DCFRpdf1\\_1262861061.pdf](https://www.ccbe.eu/NTCdocument/DCFRpdf1_1262861061.pdf) (access 22.08.2022):

<sup>45</sup> Տե՛ս Convention on the Limitation Period in the International Sale of Goods, Date of adoption: 14 June 1974, Date of adoption of amending protocol: 11 April 1980, Entry into force: 1 August 1988, [https://uncitral.un.org/en/texts/salegoods/conventions/limitation\\_period\\_international\\_sale\\_of\\_goods#:~:text=The%20Limitation%20Convention%20establishes%20uniform,its%20breach%2C%20termination%20or%20validity](https://uncitral.un.org/en/texts/salegoods/conventions/limitation_period_international_sale_of_goods#:~:text=The%20Limitation%20Convention%20establishes%20uniform,its%20breach%2C%20termination%20or%20validity) (access 22.08.2022):

<sup>46</sup> Իրավինականների մեծամասնությունում, որոնցում հայրենական իրավունքը դիմում է տվյալ ինստիտուտին, արտասահմանյան իրավակարգերն օգտագործում են այլ միջոցներ. վաղեմության հատուկ (երկարացված) ժամկետներ, հոսքի սկզբի առանձնահատուկ որոշում կամ անչափահասների և անգործունակների պահանջների նկատմամբ վաղեմության ժամկետների լրանալը հետաձգելու մասին կանոնների սահմանում, վաղեմության կասեցման հնարավոր հիմքերի ընդլայնում և այլն: Տե՛ս Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации / отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М.: Изд. М-Логос, 2018, էջ 1241:



Ժամկետը վերականգնելու կառուցակարգից և սահմանափակվել միայն կասեցման ինստիտուտի գոյությամբ<sup>47</sup> :

Այսպիսով, առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել հայցային վաղեմության ժամկետի վերականգնում նախատեսող ՔՕ 342-րդ հոդվածը, իսկ ՔՕ 339-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում՝ նախատեսելով, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը համարվում է կասեցված, եթե իրավունքի պաշտպանության իրականացմանն արգելք է հանդիսացել անձի կամքից անկախ և անկանխելի բացառիկ հանգամանք:

---

<sup>47</sup> Այս կերպ կլուծվեն նաև խնդիրները՝ կապված այնպիսի հարցերի հետ, թե ինչ տևողության դեպքում է հանգամանքը համարվում խոչընդոտ, դրա վերանալուց հետո ինչքան ժամանակում անձը պետք է իրականացնի իրավունքների պաշտպանությունը:

**Գրականության ցանկ (reference list, список литературы)**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50).  
The Civil Code of the Republic of Armenia, HO-239, adopted on 05.05.1998, entered into force on 01.01.1999, Official Journal of the Republic of Armenia 1998.08.10/17(50).
2. Հայաստանի Հանրապետության կառավարության՝ «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշում, ընդունվել է 26.05.2006թ., ուժի մեջ է մտել 16.07.2006թ., ՀՀՊՏ 2006.07.06/36(491) Հոդ.781.  
Decision of the Government of the Republic of Armenia No. 825-N of May 26, 2006 “On approving the procedure for organizing medical-sanitary and preventive health care for detainees and convicts, using medical facilities of healthcare authorities and involving their medical staff for this purpose”, adopted on 26.05.2006, entered into force on 16.07.2006, Official Journal of the Republic of Armenia 2006.07.06/36(491), Art. 781
3. Վճռաբեկ դատարանի՝ 2016թ. հուլիսի 22-ի թիվ ԵՄԴ/2775/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը.  
The decision of the Court of Cassation of July 22, 2016 on Civil Case No. EMD/2775/02/14.
4. Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ԱՎԴ3/0144/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշումը.  
The decision of the Court of Cassation of October 4, 2013 on Civil Case No. AVD3/0144/02/12.
5. Վճռաբեկ դատարանի՝ 2007 թ. նոյեմբերի 9-ի թիվ 3-1133(ՎԴ) քաղաքացիական գործով կայացրած որոշումը.  
The decision of the Court of Cassation of November 9, 2007 on Civil Case No. 3-1133(VD).
6. Վերաքննիչ դատարանի՝ 2020թ. օգոստոսի 21-ի թիվ ՏԴ/2323/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը.  
The decision of the Court of Appeal of August 21, 2020 on Civil Case No. TD/2323/02/19.
7. Վերաքննիչ դատարանի՝ 2019 հունիսի 6-ի թիվ ԵԱԶԴ/3849/02/15 քաղաքացիական գործով կայացրած որոշումը.  
The decision of the Court of Appeal of June 6, 2019 on Civil Case No. YAKD/3849/02/15.

8. Վերաքննիչ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 24-ի թիվ ԿԴ3/1217/02/14 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:  
The decision of the Court of Appeal of July 24, 2015 on Civil Case No. KD3/1217/02/14.
9. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2020թ. մարտի 11-ի թիվ ՏԴ/2323/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:  
The decision of the Court of General Jurisdiction of Tavush Marz of March 11, 2020 on Civil Case No. TD/2323/02/19
10. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր-իրավասության դատարանի՝ 2020թ. մարտի 17-ի թիվ ԵԴ/36304/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:  
The decision of the Court of General Jurisdiction of First Instance of Yerevan of March 17, 2020 on Civil Case No. ED/36304/02/19.
11. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020թ. օգոստոսի 28-ի թիվ ԵԴ/21599/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:  
The decision of the Court of General Jurisdiction of First Instance of Yerevan of August 28, 2020 on Civil Case No. ED/21599/02/19.
12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. մարտի 4-ի թիվ ՇԴ/3951/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:  
The decision of the Court of General Jurisdiction of Shirak Marz of the Republic of Armenia of March 4, 2019 on Civil Case No. SHD/3951/02/18.
13. ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. հոկտեմբերի 1-ի № ԳԴ4/2018/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:  
The decision of the Court of First Instance of General Jurisdiction of Gegharkunik Marz, RA of October 1, 2019 on Civil Case No. GD4/2018/02/18.
14. ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի նոյեմբերի 29-ի № ԳԴ4/2344/02/18 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:  
The decision of the General Jurisdiction Court of First Instance of Gegharkunik Marz, RA, of November 29, 2019 on Civil Case No. GD4/2344/02/18.
15. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019թ. դեկտեմբերի 11-ի թիվ ՇԴ1/0848/02/19 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:  
The decision of the Court of General Jurisdiction of Shirak Marz of the Republic of Armenia of December 11, 2019 on Civil Case No. SHD1/0848/02/19.
16. ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016թ.-ի մայիսի 5-ի թիվ ԱՎԴ/3507/02/15 քաղաքացիական գործով կայացրած որոշումը:

The decision of the Court of General Jurisdiction of Ararat and Vayots Dzor Marzes of RA of May 5, 2016 on Civil Case No. AVD/3507/02/15.

17. ՀՀ Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015թ. ապրիլի 1-ի թիվ ԵԱ-ՔԳ/1553/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումը.

The decision of the Court of General Jurisdiction of Arabkir and Kanaker-Zeytun Administrative Districts of Yerevan, RA of April 1, 2015 on Civil Case No. YAKD/1553/02/13.

18. Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ ԵԱ-ՔԳ/0887/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումը.

The decision of the Court of First Instance of General Jurisdiction of Arabkir and Kanaker-Zeytun Administrative Districts of Yerevan of November 1, 2013 on Civil Case No. YEAKD/0887/02/13.

19. Convention on the Limitation Period in the International Sale of Goods, Date of adoption: 14 June 1974, Date of adoption of amending protocol: 11 April 1980, Entry into force: 1 August 1988, [https://uncitral.un.org/en/texts/salegoods/conventions/limitation\\_period\\_international\\_sale\\_of\\_goods#:~:text=The%20Limitation%20Convention%20establishes%20uniform,its%20breach%2C%20termination%20or%20validity](https://uncitral.un.org/en/texts/salegoods/conventions/limitation_period_international_sale_of_goods#:~:text=The%20Limitation%20Convention%20establishes%20uniform,its%20breach%2C%20termination%20or%20validity) (access 22.08.2022).

20. Principles, Definitions and Model Rules of European Private Law, Draft Common Frame of Reference (DCFR), Articles and Comments [Interim Edition, to be completed], prepared by the Study Group on a European Civil Code and the Research Group on the Existing EC Private Law (Acquis Group), [https://www.ccbe.eu/NTC-document/DCFRpdf1\\_1262861061.pdf](https://www.ccbe.eu/NTC-document/DCFRpdf1_1262861061.pdf) (access 22.08. 2022).

21. Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, <https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016> (access 22.08.2022).

22. Определение КГД ВС РФ от 25 ноября 2014 г. № 78-КГ14-36, [http://www.supcourt.ru/stor\\_pdf.php?id=622776](http://www.supcourt.ru/stor_pdf.php?id=622776) (մուտք 22.08.2022թ.).

The decision № 78-КГ14-36 of the Supreme Court of RF of November 25, 2014, (access 22.08.2022).

23. Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր 1, Է. Բ. Աղայան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF> (մուտք 22.08.2022թ.).

Explanatory Dictionary of Modern Armenian, Volume 1, E. B. Aghayan, “Armenia” pub. house, Yerevan, 1976, <http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF> (access 22.08.2022).

24. Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրա-

- վունք, առաջին մաս, 4-րդ հրատ., «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2014, 560 էջ.  
Barseghyan T. K., Civil Law of the Republic of Armenia, first part, 4th ed., “Tigran Mets” pub. house, Yerevan, 2014, p. 560.
25. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր 1, Գլխ. խմբ.՝ Ա. Ս. Ղարիբյան, ՀՍՍՀ ԳԱ Հր. Անառայանի անվ. լեզվի ին-տ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, [http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY\\_HY&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF) (մուտք 22.08.2022թ.).  
Explanatory Dictionary of the Modern Armenian Language, Volume 1, Ch. ed.: A. S. Gharibyan, USSR Academy of Sciences, Institute of Language after Hr. Acharyan, Yerevan, USSR Academy of Sciences Publishing House, 1969, [http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY\\_HY&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF](http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BC%D5%AB%D5%AF) (access 22.08.2022).
26. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Վիճակագրական - վերլուծական գեկոյց, ըստ 2017թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան, 2018, [https://www.armstat.am/file/article/poverty\\_\\_2018-arm.pdf](https://www.armstat.am/file/article/poverty__2018-arm.pdf)(մուտք 22.08.2022թ.).  
Social picture and poverty of Armenia, Statistical-analytical report, based on the results of the comprehensive survey of living conditions of households in 2017, Yerevan, 2018, <https://www.armstat.am/file/article/poverty 2018-arm.pdf> (access 22.08.2022).
27. Варданыан А. В., Безручко Е. В., К вопросу о неоднозначной оценке беспомощного состояния в практике верховного суда российской федерации // журнал Известия Тульского государственного университета. Экономические и юридические науки, № 3-2, 2015. С. 9-16.  
Vardanyan A. V., Bezruchko E. V., On the issue of the ambiguous assessment of the helpless state in the practice of the Supreme Court of the Russian Federation, journal “Izvestiya Tula State University”. Economic and legal sciences, pub. house “Tula State University”, 2015, No. 3-2, p. 9-16.
28. Волошина Н. П., Зозуля И. С., Егоркина О. В., Костюковская А. Е., Рассеянный склероз с фульминантным течением, Академия дистанционное обучение, Укр. мед. Часопис, №4 (84) VII - VIII 2011 г., <https://www.umj.com.ua/article/16414/rasseyannyj-skleroz-s-fulminantnym-techeniem> (մուտք 22.08.2022թ.).  
Voloshina N. P., Zozulya I. S., Egorkina O. V., Kostyukovskaya A. E., Multiple sclerosis with fulminant course, Academy of Distance Learning, Ukr. med. Chasopis, No. 4 (84) VII - VIII 2011, <https://www.umj.com.ua/article/16414 /rasseyannyj-skleroz-s-fulminantnym-techeniem> (access 22.08.2022).
29. Головин Н. М., Разграничение категорий «случай» и «непреодолимая сила»// Политика, государство и право, 2013. № 2 (14), <http://politika.snauka.ru /2013/02/653> (մուտք 22.08.2022թ.).

- Golovin N. M., Distinction between the categories “accident” and “force majeure”, Politics, State and Law, 2013. No. 2 (14), <http://politika.snauka.ru/2013/02/653> (access 22.08.2022).
30. Гражданское право: учебник, Том 1, под редакцией А. П. Сергеева, Ю. К. Толстого. М.: Изд. “Проспект”, 776 с.  
Civil law, textbook, revised and supplemented, volume 1, edited by A. P. Sergeev, Yu.K. Tolstoy, pub. house “Prospekt”, Moscow, 2005, p. 776.
31. Ефремов А. В., Начаров Ю. В., Самсонова Е. Н., Основы общей нозологии, Учебное пособие. Новосибирск, 2006, <https://studfile.net/preview/2705074/page:6/> (access 22.08.2022).  
Efremov A. V., Nacharov Yu. V., Samsonova E. N., Fundamentals of general nosology, Textbook, Novosibirsk, 2006, <https://studfile.net/preview/2705074/page:6/> (access 22.08.2022).
32. Иванова С. Н., Понятие непреодолимой силы и ее квалифицирующих признаков в современном гражданском праве//Пробелы в российском законодательстве, Юридический журнал, №2, 2008. М.: Изд. дом Юр-ВАК. С. 111-114.  
Ivanova S. N., The concept of force majeure and its qualifying features in modern civil law, Gaps in Russian legislation, Legal Journal, 2008, pub. house Yur-VAK, number 2, p. 111-114.
33. Курс лекций по патофизиологии: учебное пособие для студентов медицинских вузов: в 4-х ч., Ч. 1, Ю. Ю. Бяловский [и др.]/под ред. Ю.Ю. Бяловского, В.В. Давыдова, Рязань, 2018, 2018, 261 с., <https://rzgmu.ru/images/files/6/13090.pdf> (access 22.08.2022).  
Course of lectures on pathophysiology: textbook for students of medical universities: in 4 parts, Yu. Yu. Byalovsky [etc.]; edited by Yu. Yu. Byalovsky, V. V. Davydov, Ryazan, 2018, Part 1, 2018, p. 261, <https://rzgmu.ru/images/files/6/13090.pdf> (access 22.08.2022).
34. Мозолин В. П., Масляев А. И., Гражданское право, в 2-х ч., Ч.1, М.: Изд. Юрист, 2005, <https://jurisprudence.club/pravo-grajdanskoe/priostanovlenie-pereryiv-vosstanovlenie.html> (access 22.08.2022).  
Mozolin V. P., Maslyayev A. I., Civil Law, in 2 parts, part 1, Moscow, pub. house “Yurist”, 2005, <https://jurisprudence.club/pravo-grajdanskoe/priostanovlenie-pereryiv-vosstanovlenie.html> (access 22.08.2022).
35. Патофизиология: учебник: в 2 т./под ред. В. В. Новицкого, Е. Д. Гольдберга, О. И. Уразовой, 4-е изд., перераб. и доп., ГЭОТАР-Медиа, 2009, Т. 1, 848 с., <https://fnkcr.ru/elib/resource20.pdf> (access 22.08.2022).  
Pathophysiology. textbook: in 2 volumes, edited by V. V. Novitsky, E. D. Goldberg, O. I. Urazova, 4th ed., revised and supplemented, GEOTAR-Media, 2009, V. 1, p. 848, <https://fnkcr.ru/elib/resource20.pdf> (access 22.08.2022).
36. Порядин Г. В., Введение в патофизиологию. Предмет и задачи патофизиологии, Лекция 1, <https://medknigaservis.ru/wp-content/uploads/2019/01/NF0011912.pdf>

([url](#) 22.08.2022р.).

Poryadin G. V., Introduction to pathophysiology. Subject and tasks of pathophysiology, Lecture 1, <https://medknigaservis.ru/wp-content/uploads/2019/01/NF0011912.pdf> (access 22.08.2022).

37. Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации/отв. ред. А. Г. Карапетов, комментарии к статье 163, пунктам 1, 3, 4 статьи 165, статьям 171, 172, 175–177, 202–205 ГК РФ - Павлов А. А. М.: Изд. М-Логос, 2018, 1264 с.  
Transactions, representation, limitation periods: comments to articles 153-208 of the Civil Code of the Russian Federation, ch. ed. A. G. Karapetov, comments on article 163, points 1, 3, 4 article 165, articles 171, 172, 175–177, 202–205 Civil Code of the RF - Pavlov A. A.; Moscow, pub. house M-Logos, 2018, p. 1246.
38. Сланов Г. Т., Некоторые проблемы применения исковой давности//Научный альманах, N 7 (9) 2015,  
<http://ucom.ru/doc/na.2015.07.1154.pdf> ([url](#) 22.08.2022р.).  
Slanov G. T., Some problems of application of limitation periods, Scientific Almanac N 7 (9) 2015 Legal Sciences, <http://ucom.ru/doc/na.2015.07.1154.pdf> (access 22.08.2022).
39. Тархов В. А., Гражданское право. Общая часть: Курс лекций. Чебоксары: Чув. кн. изд-во, 1997, 331 с.  
Tarkhov V. A., Civil Law. General part. Course of lectures, Cheboksary: Chuv. book pub. house, 1997, p. 331.
40. Шарикова В. С., Скрипченко Н. Ю., «Беспомощное состояние потерпевшего»: доктринальное определение и правоприменительная практика//Таврический научный обозреватель, № 3 (ноябрь), 2015, с. 145-148.  
Sharikova V. S., Skripchenko N. Yu., “Helpless state of the victim”: doctrinal definition and law enforcement practice, Tauride Scientific Observer, No. 3 (November), 2015, pub. house “Interregional Institute for Territorial Development”, p. 145-148.
41. 41. Atlas of MS, 3rd edition, PART 2: Clinical management of multiple sclerosis around the world, Key findings about the diagnosis and clinical management of MS, MS international federation, April 2021, <https://www.msif.org/wp-content/uploads/2021/05/Atlas-3rd-Edition-clinical-management-report-EN-5-5-21.pdf> (access 24.04.2023).
42. Stanley L. Robbins, Jonathan H. Robbins, Dante G. Scarpelli, Classifications Of Diseases, <https://www.britannica.com/science/human-disease/Classifications-of-diseases> (access 22.08.2022).
43. <https://idioms.thefreedictionary.com/duck+test> (access 24.04.2023).

**Kristine Gabuzyan**

*Adviser to the Prosecutor General of the Republic of Armenia,  
Lecturer of the Chair of Civil Law, Faculty of Law, Yerevan State University*

## **SOME ISSUES OF THE APPLICATION OF THE INSTITUTION OF RESTORATION OF THE LIMITATION PERIOD<sup>1</sup>**

### **Abstract**

The article is devoted to the problems related to application of the institution of restoration of limitation periods. The article examines the criteria and conditions for application of the limitation period and the interpretations given to them in practice.

The article draws parallels between the institutions of suspension and restoration of limitation periods and discusses the necessity of the existence of the institution of restoration of limitation periods.

As a result, taking into account the international practice, the inexpediency of providing for the restoration of limitation periods as a separate institution is justified, taking into account also the practical problems arising from it.

The conducted analysis allows us to conclude that conditions considered necessary for restoration, such as the fact that these circumstances should be related to a person, only the submission of a petition by a natural person, should in fact be excluded, taking into account the interpretations given in practice, and other conditions - the exclusivity and justifiability of the circumstances, as well as the occurrence of these circumstances in the last six months of the limitation period, and if that period is equal to six months or less than six months during the limitation period, fully fit into the criteria submitted to the grounds of suspension. And for something that can be fully brought under the institution of suspension, there is no need to have an additional institution - the restoration of the limitation periods - especially considering that it does not solve any problem, and even more, it adds uncertainty, difficulties of application and contradictions. Therefore, we suggest abandoning the institution of restoration of limitation periods and limit ourselves only to the existence of the institution of suspension.

**Keywords:** limitation period; term; suspension; restoration; exclusive circumstances; to recognise justifiable.

---

<sup>1</sup> The article was presented on 08.10.2023 and was reviewed on 13.11.2023.



**Кристине Габузян**

*Советник Генерального прокурора Республики Армения,  
преподаватель кафедры гражданского права факультета права  
Ереванского государственного университета*

## **НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ИНСТИТУТА ВОССТАНОВЛЕНИЯ СРОКА ИСКОВОЙ ДАВНОСТИ**

### **Абстракт**

Статья посвящена проблемам, связанным с применением института восстановления срока исковой давности. В статье рассматриваются критерии, условия, необходимые для применения института восстановления срока исковой давности, и толкования, которые им даны на практике.

В статье проводятся параллели между институтами приостановления и восстановления срока исковой давности, а также рассматривается необходимость существования института восстановления срока исковой давности как таковой.

В результате с учетом международного опыта обоснована нецелесообразность предусматривать восстановление срока исковой давности как отдельный институт с учетом вытекающих из этого практических проблем.

Проведенный анализ позволяет сделать вывод о том, что некоторые условия, считающиеся необходимыми для восстановления, например то, что данные обстоятельства должны быть связаны с конкретным лицом или что заявление должно быть подано только физическим лицом, фактически должны быть исключены с учетом толкований, которые были даны на практике, а иные условия – исключительность и уважительность обстоятельств, а также наступление этих обстоятельств в последние шесть месяцев срока исковой давности, а также если этот срок равен шести месяцам или менее шести месяцев в течение срока исковой давности – полностью соответствуют требованиям, предъявляемым к основаниям приостановления. А для того, что вполне можно подвести под институт приостановления, нет необходимости иметь дополнительный институт – восстановление срока исковой давности – особенно если учесть, что он не решает никакой проблемы, и даже более того, добавляет неопределенность, трудности применения и противоречия. Поэтому предлагаем отказаться от института восстановления пропущенного срока исковой давности и ограничиться лишь институтом приостановления.

**Ключевые слова:** исковая давность; срок; приостановление; восстановление; исключительный случай; признать уважительным.

---

<sup>1</sup> Статья была представлена 08.10.2023 и прошла рецензирование 13.11.2023.